

Մ Ա Ց Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՍԱԿՈՑ Թ. ԹՆՈՂԻՆՆ. Կիլիկիոյ Աղևտը, Էստոր Բ. 4. Գոլիս 1914. էջ 386:

“Կիլիկիոյ աղէտին պատմութեան Բ. Հատորն ալ ըլլա սեսաւ. 336 էջերէ բաղկացեալ ստուար գործք մը, բովանդակութեամբ աւելի քոն ու պատկերներով աւելի զարգարուն քան Ա. Հատորը (Հմմտ. “Հանգ. Ամս., 1912, էջ 366):

Ներկայ Հատորիս բովանդակութիւնն է գլխաորարար Հալէպի եւ անոր մերձեկայ գաւառներուն մէջ եղած ջարդերուն պատմութիւնը: Թ. Թ. Թերզեան մի առ մի կը ցուցադրէ կարմիր Համօրին վերջին անգովթ ու վայրագ սպանութիւնները անտիրունը Հայերուն լացն ու կոծը, բազմաթիւ քաղաքներու, գիւղերու քանդուցն ու աւերումը, միով բանիւ այն ամէն արիւնտտ տեսարաններն, որոնք նոյն գաւառներուն մէջ ցաւալի իրականութեամբ տեղի ունեցան: Մի եւ նոյն ժամանակ ստոյգ վայրութիւններով ցոյց կու տայ մեղի, որ այլ ահաւնի կոտորածը կանխագոյն ծրագրու մը եղած է, այնու որ մահմետական շարժումը այս կամ այն տեղուան մէջ չէր սահմանափակուած, այլ ընդհանուր էր: Բարեբախտաբար, ինչպէս կ'ըսէ Տեղեկան, շատ տեղեր Հայերը բոլորովին ալ անպատրաստ չէին, որուն հետեւութեամբը քիչ շատ կրցան դիմարդել մոլեգին խոժժանին յարձակումներուն:

Մեծ. Հեղեմակն հոս ալ իւր ըսածներուն իբր պայցոյց, ըստ կարելոյն փոյթ տարած է ձեռք անցընելու ամէն մէկ պաշտօնական թուղթ ու գրութիւն. նմանապէս կոտորածին աւթիւ ամէն կողմանէ եկած հեռագիրներուն օրինակներն, ընթերցողն ինչպէս պիտի տեսնէ, մի առ մի խնամքով հաւաքուած ու Հատորիս ետեւը զետեղուած են:

Աստահ էր թէ “Կիլիկիոյ աղէտին պատմութիւնը ցկատարած մի եւ նոյն առաւելութիւններով օժտուած պիտի ծնայ. եւ այն ատեն ստուգիւ “Կիլիկիոյ աղէտը, պիտի ըլլայ Հայերի մը, որուն մէջ հետաքրքիրն ալ, ազգասերն ալ եւ մանաւանդ պատմախոյը իւր խնդրածը պիտի գտնէ պարզուած իւր աշաց աւրջն այնպէս, ինչպէս ներկայ ժամանակս կը պահանջէ:

4. Թ. ՏԵՐ-ՄԱՐԱՍԻԸՆԱՆ



Ա Յ Ե Ն Ա Յ Ե Ր

1. Դարձեալ հայ Տպագրութեան 400ամակոյ: — Շնորհակալ եմ, որ Մշակի յարգելի խմբագրութիւնը արժանի համարած է ուշագրութեան մեր Հանդիսի նախորդ թուին մէջ հրատարակած մէկ փոքրիկ “Այլեւայլք” Բայց Մշակի խմբագրութիւնը զմեզ լիովն չէ հասկցած. թէպէտ մեր ըսածները շատ որոշ էին:

«. Մեք երբեք չենք ուզած հաստատել թէ Թուրքներն հանդիսավայրը իշխածին պէտք չէր ըլլալ. տեղը մեղի համար անտարբեր է, բաւական որ որոշուած ըլլայ ազգին կողմանն:»

Բ. Մեք ոչ Թիֆլիսի եւ ոչ ալ Պոլսոյ Թանձնատողմները իշխածին Թանձնատողմն գերադաս համարած ենք. իրեւ 25 տարի անընդհատ ազգին ծառայութեան նուիրուած թերթի մը խմբագրական մարմին կարծենք թէ իրաւունք ունէինք պահանջելու որ զուտ ազգային քաղաքագրութեան խնդրոյ մը մէջ իշխածին Թանձնատողմը առանց նկատողութեան անելու միւս Թանձնատողմները կամ գէթ ազգին գլխաւորական դասակարգը պէտք չէր հրամայողական դիրք մը բռնած «Motu proprio» որոշումներ ընել:

Գ. Համոզուած ենք, որ Մշակի յարգելի խմբագրութեան պաշտպանած Թուրքները համազգային է, բայց չի կրնար մեզմէ պահանջուիլ, որ նոյն համոզումը ունենանք նաեւ իշխածին յանձնատողմին մասին, քանի որ ծրագրին բովանդակութիւնը հակառակը կը ցուցընէ, եւ՝ որ անշուշտ մեծ զարմանք պիտի պատճառէ Մշակի խմբագրութեան, ոչ Թուրքներն են եւ ոչ ալ նոյն առթիւ հրատարակուելիք գրութեան մասնակցութեան հրաւեր եկաւ մեզի:

Անգամ մըն ալ կը կրկնենք. եթէ կուզուի, որ Հայ Տպագրութեան 400ամակը պատմական համազգային նշանակութիւն մը ստանայ ազգային կեանքին մէջ տարի մը յետմագելու է, որպէս զի նախ մտքերու համաձայնութիւն գոյանայ, որմէ կանխում ունի տակին համազգային ըլլալը:

4. Ա. ՄԱՏԻՍԻԸՆԱՆ

2. Դասական հայերէնը եւ Ակնայ գաւառաբարբառը: — Դր. Ս. Մ. Գ. ա-